


Linn
397

Stroph.

hypericifolia

Linn.



124
397
4201

4.
ՓԱՓԱԶԵԱՆ


233
462



ԵՐԵՔ ՊԱՏԿԵՐ

1010
41369

(ԱՐՏԱՏՊԱԾ «ԱՂԲԻԻՐ» ԱՄՍԱԳՐԻՑ)



Ի Ա Ք Ո Ւ
Տ Պ Ա Ր Ա Ն «Ա Ր Օ Ր»
1894

4381

462

Дозволено цензурою Тифлисъ,
17-го Декабря 1893 года.

ՆԱԾԱԿ ՅԻՍՈՒՍԻՆ

Ձեր նստած քաղաքի մէջ կալ մի տուն:
Մի հետաքրքրուիք թէ ո՞րտեղ է, ո՞ր փողո-
ցումն է այդ տունը, որովհետեւ ես, որ նոր
եմ եկել ձեր քաղաքը, փողոցների անունները
չը գիտեմ:

Տունը մի լուսամուտ ունէր և լուսամուտի
մէջ մի մանուկ տեսայ, որ փողոցն էր նայում:

Գրաւեց ինձ այդ սիրուն մանուկը և ես
կանգնեցի ու նայում էի:

Ո՛վ է տեսել ձեզանից մէկին, որ աշխա-
տում է լալ, բայց չի կարողանում: Հեկեկում
է և աչքերը տրորում կարմրացնելու չափ:

Իմ տեսած մանուկն էլ այդպէս էր անում,
բայց երբ ինձ տեսաւ, մի քիչ նայեց, լեռնոյ
արագ շարժումով ձեռքը դուրս հանեց և ես
տեսայ թէ ինչպէս մի թղթի կտոր բնկաւ
գետին:

29-396

397-2004



Վազեցի թուղթը առի, մանկական գրերով գրուած մի նամակ էր այդ: Վեր նայեցի, մանուկը ժպտեց, կռացաւ դէպի ինձ, քամին խաղացրեց նրա այտերի վրայ ընկած գլխի սև խոպուպիքը:

— Փոշտը ձգիր, ասաց նա ինձ, մի անգամ ևս ժպտեց և անհետացաւ:

Փոշտը ձգել այդչափ հեշտ չէր, որովհետեւ ձեր փոստատուներ ես չըգիտեմ և բացի դրանից, նամակը մի տարօրինակ հասցէ էր կրում իր վրայ.

— Յիսուս Փրկչին նրկնքում... գրուած էր այնտեղ:

Ժպտելով լիշեցի մի այդպիսի բան, որոյ մասին կարդացել էի, իբր թէ մի փոքրիկ աղջիկ մի նամակ է տանում փոշտը, ուղղած Ամենաբարի Աստծուն, որի մէջ նա գանգատվում է, թէ ուտելիք չունին, մեծ մայրը հիւանդ է, խեղճ են և այլն...

Եւ այսպէս, որովհետեւ փոշտը այդ նամակը չըպիտի կարողանայ իր տեղը հասցնել, մտածեցի այդ նամակը ձեզ, փոքրիկ մանուկներ, ձեզ տալ որ տեղը հասցնէք. տեսնենք, ձեզանից որոնք կանեն այդ:

Կարդացէք ահա, անգիր անելու չափ կարդացէք, ունեւոր մանուկներ:

Յիսուս-Փրկիչ,

Մայրս հիւանդ էր, դու բժշկեցիր նրան և փողոցից մի փոքրիկ եղբայր էլ ուղարկեցիր ինձ, բայց շատ է լաց լինում. չը գիտեմ ի՞նչ է ուզում: Մայրիկս ասաց, որ դու ամեն բան գիտես, ուրեմն տուր եղբօրս այն, ինչ որ ուզում է. դու տեսար անպատճառ, թէ Միհրանին մայրիկս փողոցի միջից վերցրեց: Քոյրիկս մեռաւ, ես շատ էի լաց լինում, մայրիկս ասաց, թէ Վարդուհին մօտդ է եկել. լաւ պահիր նրան, Յիսուս Փրկիչ: Վարդուհին այստեղ եղած ժամանակ, միշտ հաց էր ուզում, (ես էլ եմ ուզում, այնպէս քաղցած եմ ո՛ր), տիկնիկ էլ էր ուզում. ի՞նչ կըլինի, մայրիկս ասում էր, որ դու ամեն բան ունիս, մի քիչ էլ քոյրիկիս տուր: Թէ եկող լինի, մի քիչ փայտ ուղարկիր մեզ. փող սկի՛ չունենք, փայտն էլ մայրիկս ասում է, որ շատ թանկ է. ես մըսում եմ, ի՞նչ անեմ... Մեր փողոցի տղաները ամեն առաւօտ ուսումնարան են գնում, ես էլ եմ ուզում գնալ, ո՛վ Յիսուս, ինձի էլ մի գիրք ու-

դարկիր, ես վատ տղայ չեմ, չարութիւն չեմ անիլ, դրացի մանուկների պէս փողոցը չեմ ելնիլ, չորերս չեմ կեղտոտիլ... մայրիկս ասում է, որ ես լաւ տղայ եմ... հաւատա՛, ով Յիսուս, որ սուտ չեմ ասում, կուզես մէկ նայիր և տես, մայրիկս ասում է, որ դու շատ սուր աչքեր ունես: Մի ուրիշ բան էլ ուզեմ քեզանից, ով Փրկիչ Յիսուս, կատարիր իմ խնդիրքս, ես քեզ միշտ կը սիրեմ: Մայրիկս միշտ լաց է լինում, լինչու, չեմ իմանում. ինձ ասում է, որ երբ մեծանաս այն ժամանակ կասեմ. չի՛ լինիլ, որ դու ասես ինձ: Մեկ օր դրացի մայրիկը ասում էր, որ ես հայրիկիս մեռնելուց տաս. օր յետոյ եմ ծնուել, ասացին, որ հայրիկիս արիւնի մէջ լուացին, մսի նման կտրտեցին... Դու բան հասկացար սրանից, ով Յիսուս. ես էլ չեմ հասկացել, բայց ասում են, որ հայրիկս քո մօտը է: Խնդրում եմ, ասա որ մի անգամ գայ ես իրան տեսնեմ. դու չէ՞ որ բարի ես, ուղարկիր, ես միշտ քեզ կը սիրեմ, միշտ հնազանդ կը լինեմ, էլ չորերս չեմ կտրտիլ. կուղարկես...

Այսօր պարոն Թադէոսի տղան ինձ վատ խօսքեր ասաց, ասաց որ ես հայրիկ չունեմ,

որ քաղցած մէկն եմ. հաց չունեմ ուտելու. ճիշտ է ասում, Յիսուս-Փրկիչ, ախր նա այնքան լաւ-լաւ բաներ է ուտում ո՛ր... Մայրիկս ասում է, որ այդ տղան վատ տղայ է. ասում է թէ ունեւորների տղաները վատ են լինում... ես չեմ կարծում, չէ՞ որ Սարգիսն էլ ունեւորի տղայ է, բայց ինձ ամեն օր կարգացնում է, երբ քաղցած եմ հաց է տալիս... ինձ չի ծեծում, ինձ վատ խօսքեր չի ասում... Օրհնիր, ով Փրկիչ, օրհնիր նրան և պատասխանիր... հայրիկիս էլ ուղարկիր...

Քեզ սիրող Զո Մուշեղ.

Ունեւոր մանուկներ, ձեզնից ով ուզում է պատասխանել այս նամակին, հեշտ է. ձեր չորս կողմը նայեցէք, ձեր դրացիներին նայեցէք և խեղճ Մուշեղներ շատ կը գտնէք...

Ն Ա Հ Ա Տ Ա Կ

Ան

Աստիկ ցուրտ էր, այնպէս ցուրտ, որ մարդուս շունչը սառչում էր մազերի վրայ. այնպէս կծու քամի էր, որ չէիր կարող փողոց ելնել, եթէ մինչև իսկ մուշտակ հագնէիր: Բայց օդը պարզ էր, դաշտը ծածկուել էր սպիտակ սաւանով և արեգակի շնորհիւ մի այնպիսի գեղեցիկ կերպարանք էր ստացել, որ եթէ չը լինէր կծու քամին և ցուրտը, ո՞վ չէր գնալ փոքր ինչ ձիւների մէջ թաւալելու:

վար

Գրքերի պայուսակը ուսին գցեց Տիգրանը և տեսնելով որ վիզն ու ականջները մրսում էին, լայն օձիքը բարձրացրեց, ձեռքերը դըրպանը դրաւ և ուսումնարանի բակից դուրս

ելնելուն պէս, փոխանակ մարդկանց հետքերից կազմուած նեղ կուպարով գնալու, վազեց ձիւների մէջ, իր երկար կօշիկներով խրուեցաւ մինչև ծնկները և այսպէս, ամեն մի խրուելիս մի գուարթ ծիծաղ արձակելով, էլ չը տեսաւ, որ փոխանակ տան կողմը գնալու, դաշտի կողմն էր գնում:

Ձիւնը հետզհետէ աւելի խոր էր երևում, սակայն այդ աւելի զուարճացնում էր նրան և նա այն ժամանակ միայն կանգ առաւ, երբ այդ զուարճութիւնը սկսեց յոգնեցնել նրան:

Կանգ առաւ, չորս կողմը նայեց, չըթուները երկարացրեց և զարմացմամբ գոչեց.— վայ... այս ո՞ւր եմ եկել:

Այս միջոցին նրա աչքն ընկաւ փոքր ինչ հեռու գտնուող սառցանման ձիւնը, որ փայլում էր պայծառ արևի տփկ:

— Այ լաւ բան, գոչեց նա— երթամ փոքր ինչ սահեմ:

Շուրջը ոչ ոք չը կար. տները բաւական հեռու էին մնացել. առաջևը փովում էր ըն-

վար

դարձակ ձիւնապատ դաշտը. իսկ փայլուն ձիւնի ցածում, մի քանի կոյտ մացառներ:

Նա վազեց այդ մացառների մօտ, կախեց նորանից իր պայուսակը և սկսեց սահել:

Երբ մի քանի շրջան արել էր,

—Ո՛ւհ... ասաց, ի՞նչ լաւ ժառուց է.

Եւ երգեց սահելով՝

Մայրիկ, տես, տես այս տղան

Ինչո՞ւ սաստիկ զոգում է...

Քիչ մնաց վայր ընկնէր, բայց կարողացաւ պահպանել իրան. ձեռքերը գրպանը դրաւ ու շարունակելով սահել, շարունակեց և երգը.

...Միթէ հայր, մայր չունի դրան

Որ այդպէս շատ մըսում է...

—Ա՛յ սուր սառուց... ընդհատեց նա և ապա երգեց զիւ ձայնով՝

Մըսում է... մըսում է...

*
**

—Կը փորձեմ փոքր ինչ էլ նստելով սահել, ասաց նա և հէնց կամենում էր նստել, մէկ էլ զարմացած վեր թռաւ: X

Փոքր ինչ, միայն փոքր ինչ հեռու լսուեցաւ մի ձայն, որ աղիոգորմ կերպով և զոգ-

զոգալով մըմնջում էր

—Մայրիկ...

Նա զողաց. սիրտը ճմլուեցաւ այդ խղճուկ, արտասուելի և մեղմ ձայնից, որ զուրս էր գալիս մացառների միջից.

—Այնտեղ է. մտածեց նա և վազեց դէպի մացառները:

Կռացաւ, ձեռքերով դէն տուեց ճիւղերը և հագիւ թէ նայել էր, որ—վա՛յ... գոչեց, ցաւագին կերպարանք ստանալով, մի տղայ...

Մի տղայ էր. ընկած ձիւնի վրայ և ձիւնը ուղղակի կպչում էր նրա մերկ մարմնին, որ միայն ծածկուած էր մի կտրտուած վերարկուով:

Տղան զոգում էր, զոգում էր խղճալի կերպով և նրա փոքրիկ կապտած շրթունքները, որոնք թըջվում էին աչքերից հոսած արցունքներով, մըմնջում էին՝

—Մայրիկ...

*
**

—Մայրիկ... գոչեց նա վեր թռչելով:
Յիշեց, որ ինքն էլ մի մայրիկ ունէր և այդ մայրիկը տեսնելով, որ որդին ուշանում

էր, որչափ կը տխրէր, կը լար և կը հարցնէր.

—Ո՛ւր մնաց իմ փոքրիկ Տիգրանը...

Նա դէպի տան կողմը նայեց, յետոյ մի քայլ արաւ և ձեռքը պայուսակին տարաւ, բայց յանկարծ աչքը մացառների միջի տղային ընկաւ.

—Իսկ սո՛ւ... խօսեց նա—ինչպէս մըսում է...

Փոքր ինչ մտածեց, յետոյ արագութեամբ իր հաստ վերարկուի կոճակներն արձակեց և նրա տակը նայեց.

—Ա՛յ, շատ լաւ ժպտեց նա, մայրիկս միւս վերարկուն էլ է հագցրել:

Յետոյ ծիծաղելով հանեց հաստ վերարկուն և պարզելով դողացող մանկան, ասաց.

—Առ այս...

Մանուկը լսեց նրա ձայնը, շարժուեց, բըռնեց իր վրայ ընկած վերարկուն, զարմացած նայեց այդ ծանր հագուստին, յետոյ կիսովին նստելով, ժպտող Տիգրանին մտիկ տուաւ և ձեռքերով արցունքը սրբեց:

—Հագի՛ր, ասաց նրան Տիգրանը:

Մանուկը մի անգամ ևս նրան նայեց, յետոյ ոտքի ելաւ և վերարկուն հագաւ:

—Լաւ որ հագայ, ծիծաղեց մանուկը—

շատ ցուրտ է այստեղ...

Մանուկը դուրս եկաւ մացառների տակից. սկսում էր տաքանալ:

—Կոճակները կոճկի՛ր, ասաց նրան Տիգրանը և յանկարծ,—ո՛ւր է մայրիկդ, հարցրեց:

—Մայրի՛կ... պատասխանեց մանուկը, ձեռքով փոքր ինչ ցած երեցող տները ցոյց տալով,—մայրիկս այնտեղ է:

—Ա՛... այդ տներո՛ւմ:

—Մեր գիւղն է այդ:

—Իսկ դո՛ւ:

—Գիւղը պիտի երթայի... շատ ցուրտ էր:

—Այժմ էլ մըսում ես.

—Ո՛չ... ժպտեց մանուկը:

—Լա՛ւ, ծիծաղեց Տիգրանը—գէ՛հ ուրեմն գնա՛ ձեր տուն:

Մանուկը մի անգամ ևս Տիգրանին նայեց, ժպտեց և վազէվազ հեռացաւ...

Երբ բաւական հեռացել էր, Տիգրանը, որ նրա ետեւից նայում էր, չորս կողմը նայեց այս անգամ և մըմնջեց.

—Ինչ լաւ որ տուի...

Եւ սկսեց դողալ:

նշք

— Երթամ տուն, խօսեց ինքն իրան, պա-
յուսակն առաւ և կոխելով բարձր ձիւնի մէջ,
սկսեց ծանրութեամբ յառաջ գնալ:

Դողում էր, որովհետև ցուրտ քամին սաստ-
կանում էր և այս անգամ ձեան փոշի էլ էր
բերում իր հետ:

— Կերգեմ, որ տաքանամ, մտածեց Տիգրա-
նը և երգեց.

Ո՛հ, թնչ ցուրտ է. իրա՛ւ, մայրիկ...

Փչեց քամին, ներս բեր մանկան...

Դադարեց երգելուց, որովհետև յոգնել էր.
կանգ առաւ և նստելով ուղղակի ձիւնի վրայ,
սասց.

— Փոքր ինչ նստեմ, դեռ ուշ չէ...

Եւ շարունակեց երգը.

— Ո՞վ է տուել հագուստ տաքիկ,

Որ նա ծածկէ մէջքն ու իրան...

Ձգաց որ քամին սուրբերի պէս կտրտում է
ականջներն ու երեսը, ձեռներով ականջները
պահեց, դէմքը պայուսակով և վերջացրեց
երգը զիլ ձայնով.

Ծածկէ մէջքն ու իրան...

Իսկ քամին սաստկանում էր և բուքի էր
փոխվում. ամեն կողմից նա հաւաքում էր
ձիւնի փոշին, խփուելով այս-այն կողմ պտոյտ-
ներ էր գործում և ապա սուրալով և ուժ-
գնութեամբ այդ կոյտը մղում էր դէպի մա-
ցառները:

Փախչում էին ագռակները, ծովում, գետ-
նին էին կպչում մացառները և արեգակը, որ
մինչև այդ ժամանակ դեռ փայլում էր, ծած-
կուեցաւ. թանձր փոշին էր միայն, որ պը-
տոյտներ էր գործում դաշտի մէջ...

Ոտքի ելաւ, վճռեց յառաջ գնալ, բայց հա-
զիւ թէ մի քանի քայլ արել էր, որ քամին
ուժգնութեամբ մղեց նրան գլորեց ձիւնի
վրայ և փոշին սուրալով եկաւ լցուեց նրա
վրայ:

— Ո՛հ, ո՛հ... և նա ինձանից փոքր է...

Տղային էր լիշում... ո՛հ, փոքրիկ վսեմ ա-
րարած...

Միայն նրա գլուխն էր երևում և տեղ-տեղ
սև հագուստը. նա կծկուել էր. քանի՜ ան-
գամ փորձեց ոտքի ելնել, բայց վայր ընկաւ:

Մի անգամ յաջողեցաւ կանգնել, ժողովեց
գրատախտակը, տետրակները. դրաւ պայուսա-
կի մէջ և երբ կամենում էր գիրքն էլ գնել,
նրա միջից դուրս թռաւ մի փոքրիկ պատկեր
և քամուց մղուած՝ թռաւ հեռու...

— Իմ խեղճ պատկերս, ասաց նա տխու-
թեամբ, — վարժապետը որչափ պիտի նեղանայ,
որ մրցանակս կորցրի...

Այս միջոցին քամին խլեց նրա ձեռքից
նաև գիրքը, յետոյ մի այնպիսի ուժգնու-
թեամբ մղեց իրան էլ, որ փռեց գետին:

Վայր ընկաւ Տիգրանը, երեսը կծկեց կուրծ-
քի վրայ և գոչեց.

— Մըտում եմ...

Յետոյ միտքն ընկաւ, որ երգը կիսատ էր
թողել. ձեռներովը ականջները ծածկեց, ժրպ-
տեց ու սկսեց երգել.

Ո՛հ, ինչ ցուրտ է...

— Ո՛հ, ընդհատեց նա — այս երգեցի, այժմ
այս պիտի երգեմ.

Ինչպէս կապտել է այս տղան...

— Ուհ... ասաց, այնպէս դողում եմ, որ
չեմ կարող երգել:

Դողալով և ատամները իրար զարկելով շա-

րունակեց.

Ձէ որ այդպէս եթէ մնայ,

Կը մտնի խեղճը գերեզման...

Յանկարծ մի ձիւնի կոյտ ընկաւ և ոտքից
մինչև գլուխը ողողեց նրան. ընդհատեց եր-
գը, գլուխը ձիւնի տակից դուրս հանեց. լե-
տոյ ձեռքը մեկնեց դէպի վայր ընկած գիր-
քը, վախենալով որ քամին կարող էր նրան
էլ պատկերի պէս թռցնել հեռու, և երգեց.

Ո՛ւր է մայրիկ, որ վրան լայ...

Շունչը կտրվում էր. ձեռքը պարզեց, աշ-
խատելով վրան թափուած ձիւնը թափ տալ...
բայց չը կարողացաւ, և երբ քամին մի բուռն
փոշի էլ փչում էր դէպի նա, լսուեցաւ նրա
խուլ ձայնը, որ երգում էր.

Մայրիկ... վրան լայ...

*
* *

Սուրաց քամին, ծռուեցան մացառները,
գետնի երեսից բարձրացաւ մի թանձր փոշի
և ամեն ինչ ծածկուեցաւ այդ խառնուրդի
մէջ...

— Մայրիկ... լսուեցաւ մի մեղմ, խղճուկ
ձայն:



Եւ երբ քամին դադարել էր, դաշտը հա-
ւասար սպիտակ էր ինչպէս առաջ, այլ ևս
չէին երևում ոչ մացառները և ոչ նրա մօտ,
հողի փոխարէն, ձիւնի տակ ննջող փոքրիկ
վեհ նահատակը...

Հարկ վճար.

Բ Ի Ր Ա Մ

ՊԵՐՍԿԵԿԵՆ ԶՐԱՅՑ

(ՆՈՒՆԻ Ա... Գ...ԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Ա.

Ձէնդ Քէրիմ-խանը մեծ թագաւոր էր. նա
էր, որ շինեց Շիրազը, անմահացրեց Հաֆի-
զին և Սադիին, որոնց առաջինը սէր երգեց,
իսկ միւսը՝ Աստուած. քաջալերեց Հիւսէին
բանաստեղծին, որ բնութիւնը և բնութեան
տուած զիւցաղները գովաբանեց, խանի գոր-
ծերը և Շիրազը անմահացրեց. նա էր, որ
Շիրազին բանաստեղծական երկրի փոխեց, Ի-
րանի և Թուրանի մուգայարանը շինեց... Քէ-
րիմ-խանն էր որ 40 տարի թագաւորեց իր
ժողովրդի պաշտպանութեան համար, 40 տարի
կռիւ մղեց շրջապատող թշնամի ցեղերի դէմ,
միշտ յաղթեց և ստիպեց վայրենիներին՝ թող-
նելու ուրիշի ունեցածով ապրելու փափազը...

Ոչ մի թագաւորի ժամանակ չէին ծնել այնքան քաջ և լանդուզն մարդիկ, այնքան երկնային քաղցր խօսքերը մեղրի պէս մեզ մատուցանող բանաստեղծներ, այնքան փէճլեաններ և պարթևներ, որքան ծնում էին Քէրիմ-խանի թագաւորութեան ընթացքում:

Իրանը և Թուրանը այդ ժամանակ շատ Ռուստէմզաւներ ծնեց, շատ փէճլեաններ տուաւ, շատ զօրապետներ թշնամու վրայ սարսափ ձգեցին, շատ շալիրներ *) գեղեցիկը երգեցին, բայց ոչ մէկ փէճլեան, ոչ մէկ զօրապետ և շալիր չը թողեց այն անմահ լիշատակը, ինչ որ թողեց Բէրամը...

Բէրամն եմ երգում, ով Իրանի և Թուրանի ժողովուրդ. ձեր անմահ փրկողն եմ երգում, իր արիւնով ձեր հանգստութիւնը գրնող, թշնամու դրօշը ոչնչացնող Բէրամն եմ երգում... Թոյլ կազմուածքով, բայց լանդուզըն և լամառ գիւցազն եմ երգում, գիւցազն, որի կամքի ոյժը չեմ փոխիլ ոչ մի կռուի քաջութեան հետ...

Եւ իրաւ, Բէրամը բնութիւնից քաջութիւն

*) Բանաստեղծ երգիչներ:

չէր ստացել և ոչ Ռիւստէմզաւի պահապան հրեշտակն ունէր իրան բարեկամ: Մի գիւղացի կին նրան աշխարհ բերաւ, մի մօլլա նրա կաշին քերթելով Ղուրանն անգիր անել տուաւ, իր կռուի հայրը մահ բռնել սովորեցրեց, իսկ իր ընկեր Ֆէրրաջն էր միայն, որ նրան սուր բռնելու վարժեցրեց:

Իր գիւղի լեռները և ձորերը եղան նրա առաջին աշխարհը, նժուգների վրայ նստած սար ու ձոր չափչփելը եղաւ նրա ձիավար-ժութիւնը և գեղեցիկ Ֆաթման եղաւ պատճառ, որ Բէրամը թողեց իր գիւղը և գնաց ընկաւ Քէրիմ-խանի ահարկու գնդի մէջ: Բէրամը Ֆաթմային կորցրեց իր սիրոյ երկրորդ ամսումը. թշնամի Բախտիարները **) մի օր փախցրին Ֆաթմային և այլևս Բէրամը ոչ տեսաւ նրան և ոչ էլ լսեց նրա մասին:

Սիրտը դառնութեամբ լցուած թողեց նա գիւղը. Բախտիարների դէմ վրէժով վառուած՝ մտաւ Շիրազ, Քէրիմ-խանի պալատը գնաց, ընկաւ թագաւորի ոտքերը և աղաղակեց.

— Մեծդ թագաւոր, թոյլ տուր ինձ մտնել

**) Միհրէն այժմ գոյութիւն ունեցող մի վայրենի ցեղ է դա, բռնել է Արեւելեան Պարսկաստանի ամուր վայրերը:

քո գնդիդ մէջ: Թագաւորը նայեց նրա նիհար
և թույլ կազմուածքին, ծիծաղեց և ասաց.

— Գնա կորիւր, պարոն «Փչեմ-ընկնես»... իմ
գնդիս մի զինուորը քեզ նման հարիւրին
կուլ կը տայ...

Բայց որովհետեւ Բէրամը շատ աղաչեց,
Քէրիմ-խանը փոքր ինչ մտածելուց յետոյ՝ ա-
սաց նորից.

— Պարոն «Փչեմ-ընկնես», դու տեսե՞լ ես
իմ ծերունի հսկայ փէհլեանին... լա՛ւ, ես
քեզ կընդունեմ իմ գնդիս մէջ, եթէ դու սիրտ
կանես դուրս գալ նրա դէմ...

Բէրամը համաձայնեց և Քէրիմ-խանը մու-
նետիկ ձգեց Շիրազի փողոցները և ժողովրդ-
ին հրաւիրեց գալ մէյդանը հանդիսատես
լինելու Բէրամ գիւղացու և խանի փէհլեանի
գօտեմարտութեանը:

Լցուեց մէյդանը իշխաններով և հասարակ
ժողովրդով, եկան այնտեղ փէհլեաններ և
զօռխանայի *) աշակերտներ, եկաւ և զօր-
քը և բոլորը ծիծաղում էին, տեսնելով նի-

*) Դա մի հիմնարկութիւն է, ուր փէհլեանները անում
են իրանց գլխաւոր մարմամարզական կրթութիւնները.
Պարսկաստանի ամեն քաղաքում կայ:

հար սլզտիկ Բէրամին, որ համարձակում էր
աժդահա *) փէհլեանի դէմն ելնել:

Խանի փէհլեանը կիսամերկ, հպարտ քալ-
լուածքով կրկեսը մտաւ և ծիծաղելով նայեց
Բէրամին, որ հանդարտութեամբ շրթերն էր
հանում. սառն էր Բէրամի դէմքը, անյողդողդ-
նրա շարժուածքները և անշփոթ նրա վար-
մունքը:

Այդ զարմացրեց ահարկու փէհլեանին:

— Մթթէ այս խեղճը հաւատացած է, թէ
կարող է ինձ յաղթել... մոմուաց նա և վախ
զգաց, վախ զգաց այն փէհլեանը, որ իր
կեանքում հարիւր փէհլեանի դէմ էր ելել,
հարիւրի քիթն ու բերանը ջարդել և ոչ մի
անգամ էլ վախ չէր զգացել:

Հնչեց փողը, ածեցին շեփորներ և թմբուկ-
ներ, ծերունի փէհլեանը ըմբշի դիրք ստա-
նալով, մի պտոյտ գործեց կրկեսի մէջ և մի
կողմը կանգնելով, սպասեց Բէրամին: Եւ վա-
զեց Բէրամը դէպի նա անշփոթ և գրկեց
նրան: Երկու ըմբիշները փոքր ինչ կպած մը-
նացին իրարու և ահա յանկարծ տեսան որ

*) Ահարկու, վիշապանման, հսկայ:

Բէրամբ գտնվում է փէճլեանի բարձրացրած ձեռքերի վրայ, ձեռքեր, որոնք շարժուեցան և Բէրամբ գնաց քիթ ու բերանը ջարդելու տասը քայլ հեռու գտնուող քարակոյտերի վրայ... Բարձրացաւ մի ընդհանուր ծիծաղ. ծերունի փէճլեանը ժպտաց և ասաց ինքնիրան.

— Եւ ես լիմարս վախենում էի այս տղայից...

Ասաց, երկու քայլ արաւ և պատրաստուեց կրկէսից դուրս գնալու. բայց լսնկարծ վախեցած ետ ետ քաշուեց: Բէրամբ, գլուխը ջարդուած, քիթ-բերանը արիւնոտ Բէրամբ, գալիս էր դէպի նա և աղաղակում.

— Սպասիր, դեռ ևս չեմ յաղթուել...

Նա երերում էր, արիւնը նրա գլխից և դէմքից աղբիւրի պէս վազելով ծածկում էր շորերը և ներկում դէմքը, բայց նա գալիս էր, բռունցքը սեղմած, գալիս էր ուղղակի...

Այս անգամ ծերունի փէճլեանը իրաւամբ վախ դրաց, լետոյ խղճաց Բէրամբին, ուստի և միտքը դրեց նրան ձգելու չաշխատել, այլ միայն պաշտպանուիլ: Եկաւ Բէրամբ, նորից գրկեց փէճլեանի հաստ մէջքը, նորից իր արիւնոտ գլուխը կռթնեցրեց նրա լայն կուրծ-

քին և այնպէս ցնցեց փէճլեանին, որ սա մոռանալով Բէրամբին խղճալու մտադրութիւնը, երկրորդ անգամ բարձրացրեց նրան և այնպէս շարտեց դէպի հեռու, որ խեղճ երիտասարդն ընկաւ, ձախ թւը կոտրեց և ուշաթափ ընկաւ...

— Այս անգամ վերջացաւ, գոչեց ժողովուրդը:

— Ի՜նչ յամառն է, բացականչեցին փէճլեանները:

Քէրիմ-խանը ծիծաղեց ընկած Բէրամբի վրայ, իսկ ծերունի փէճլեանը մօտեցաւ իր շորերին և սկսեց հագնուիլ... Ըմբշամարտութիւթիւնը վերջացած համարուեց և Քէրիմ-խանը վեր կացաւ գնալու...

Յանկարծ ընկած Բէրամբ ուշքի եկաւ, բարձրացաւ, դողդոջիւն քայլերով հրեց ամբոխը, մօտեցաւ հագնուող փէճլեանին և որչափ ոյժ ունէր՝ գոռաց.

— Սպասիր, դեռ ևս չեմ յաղթուել...

Բոլորը կանգ առին, ապշութիւնը կատարեալ էր. ծերունի փէճլեանը հեռացած ետ քաշուեց և բացականչեց.

— Բայց էլ ողջ տեղդ չի մնացել, անմիտ:

—Այ թեև դեռ ողջ է, ժպտաց Բէրամը և յառաջացաւ դէպի նա:

ՓէՏլեանը յուզուեց, նա մի տեսակ սարսափով նայեց ալդ թույլ կազմուածքով ուժեղ կամքի վրայ և փոքր ինչ մտածելուց յետոյ՝ դարձաւ դէպի Քէրիմ-խանը և ասաց.

—Ո՛չ, խանն ապրած կենայ, ես հրաժարվում եմ սրա հետ կռուելուց...

—Կռուենք, աղաղակեց Բէրամը—դեռ դու չես յաղթել, իսկ ես՝ պիտի յաղթեմ քեզ...

—Կռուեցէք, ասաց Քէրիմ-խանը ժպտելով:

—Ո՛չ, կրկնեց փէՏլեանը մօտենալով թագաւորին—այս տղան հազուադիւս մի տղայ է, սրա յանդգնութիւնը և յամառութիւնը, սրա կամքի երկաթէ ոյժը աւելի մեծ գործեր կարող են տեսնել, քան թէ իմ և քո շատ քաջ զօրապետներիդ քաջութիւնները... խան, յանդգնութիւնը և յամառութիւնը հաւասար են մի ամբողջ քաջութեան... Ափսոս է այս տղան, պահիր սրան քո զնդիդ մէջ և սա է, որին շալիրները ապագայում պիտի նուիրեն իրանց երկնային գրիչները...

Քէրիմ-խանը լսեց նրան և այսպէս Բէրամը մտաւ Քէրիմ-խանի զնդի մէջ, բայց այն-

քան թույլ էր նա, այնքան նիհար, որ նրա անունը մնաց «Փէմ-ընկնես»...

Ո՛վ Իրանի և Թուրանի ժողովուրդ, այս միևնոյն «Փէմ-ընկնես» էր, որն ազատեց հայրենիքը իր սուրբ արիւնով և դրա մէջ գտաւ իր վարձատրութիւնը...

Բ.

Այս միջոցներում էր, որ Սպահանի Բախտիարները կատաղել էին և Քէրիմ-խանի երկրի սահմանները ոտքի տակ առած այրում, ջարդում, քանդում ու ամեն տեսակ բարբառոսութիւններ անում էին... Աստուած եթէ ուզենար մի մեղաւոր ժողովրդի պատուհասել, չէր կարող այդքան անգթութիւններ անել, չէր կարող այդքան անգթութիւններ և թափում էին Բախտիարները... Ժողովուրդը թողած իր հողը, տուն ու տեղը՝ փախչում-ցրվում էին դէպի լեռները, իսկ թշնամին փշրելով ամեն ինչ, աւերելով գիւղեր, վառելով դաշտեր, արիւնով կարմրեցնելով մեր երկրի սուրբ հողերը՝ խուժեալ առ խուժեալ մօտենում էին Շիրազին:

Քէրիմ-խանին հասաւ գուժկանը. խանը

հաւաքեց իր զօրքը և թշնամու դէմ գնաց, բայց հէնց առաջին ճակատամարտում յաղթուեց նա և հազիւ 500 ձիաւորների հետ փախչելով՝ ամրացաւ Քեուհ ամրոցի մէջ, լուր ուղարկելով Նիրազ օգնական զօրք գալու համար:

Բախտիարները այդ յաղթութիւնը տանելուց յետոյ հաւաքուեցին, իրանցից մէկին ընտրեցին զօրավար և կանոնաւոր կերպով սկսեցին յառաջանալ դէպի Քեուհ, ծածանելով իրանց սպիտակ դրօշակը, որի վրայ նկարուած էր մի գալարուած ահեղ վիշապ:

Քէրիմ-խանի զրութիւնն անտանելի էր. օգնական զօրքը չէր հասնում. թէև բերդն անմատչելի էր և պաշար շատ կար, բայց Քէրիմ-խանը կատաղութիւնից իրան կտրտում էր, երբ ամրոցի բարձրութիւնից տեսնում էր ժողովրդի կրած տանջանքը բարբարոս Բախտիարների ձեռքից:

Մի գիշեր նա տեսաւ թէ ինչպէս Բախտիարները մի գիւղ վառել, կրակի վրայ խորովում էին գիւղացիներին, որոնց գլուխները ցցած իրանց երկար նիզակների վրայ, ալլանդակ պար էին կազմել վառուող գիւղի շուր-

ջը և գիւղացոց օրհասական աղաղակները խլացնել չէին կարողանում նրանց խուզոտ օւնոցներով...

Նրա արիւնը եռ եկաւ, նա դարձաւ իրան շրջապատող զօրապետներին և զինուորներին ու ասաց.

—Մթթէ չը կան ձեր մէջ մարդիկ, որ ազատեն հայրենիքը այդ բարբարոսների ձեռքից...

Ամենքը լռեցին, ոչ ոք չէր համարձակում իջնել 1000-ից աւելի կատաղի խուժանի դէմ...

—Է՛հ, գոչեց ան ժամանակ խանը—ուրեմըն թող կործանուի այն ազգը, որ իր հայրենիքը գերութիւնից ազատելու սիրտ ունեցող որդիք չունի...

Եւ հիւանդացաւ Քէրիմ-խանը, գրեց իր կրտակը ու կամենում էր մեռնել, բայց միւս օրը Բէրամը խնդրեց խանին տեսնել. եկաւ ընկաւ թագաւորի ոտքը և աղաղակեց.

—Թագաւորը ողջ կենայ, մեզ հրաման տուր դուրս գնալ կռուելու այդ բարբարոսների դէմ. մենք հարկը հոգի ենք, մեռնելու պատրաստ մարդիկ, իսկ գլխաւորները ես

և իմ ընկեր Ֆէրրաջն ենք:

Քէրիմ-խանը ծիծաղեց:

— Կորիւր, ասաց, — իմ փէհլէականներս վախե-
նում են մեռնելուց, դժուար մնացիր, պա-
րոն «Փչեմ-ընկնես»: — Ոչ երբէք, ասաց Բէրա-
մը, — խանը թող յիշէ, որ ես «Փչեմ-ընկնես»
եմ, երբ կամենամ. իսկ մինչև այժմ դեռ չեմ
կամեցել, մանաւանդ այժմ բոլորովին չեմ
կամենում...

Այնքան ամուր ձայնով և խորխտութեամբ
ասաց նա այս խօսքերը, որ Քէրիմ-խանի մէջ
ծագեց մի փոքրիկ լոյս և նա ասաց.

— Գնացէք, եթէ ոչինչ չէք անիլ, գոնէ
կռուելով կը մեռնիք... Բէրամն ու Ֆէրրաջը
ընկան հարիւր զինուորաների առջև և մթնով
բերդից այնպէս դուրս գնացին դէպի դաշտը,
որ թշնամին չը նկատեց նրանց...

Սողալով և դաշտյնները բերաններն առած,
մի ձեռքում նիզակ, թևի վրայ նետերի կա-
պարճն ու աղեղը, նրանք խոտերի միջից մօ-
տեցան թշնամու բանակին և աշխատեցին
ինչքան կարելի է չընկնել կրակի լոյսով լու-
սաւորուած մասի մէջ:

Բախտիարները խումբ առ խումբ նստել

էին կրակի լուսաւորուած մասերի մէջ, փա-
էին եփեղ՝ գիւղի ոչխարները մորթոտել, խո-
րոված էին անում, իսկ նրանց շուրջը ընկել
էին կոտորած գլուխներ, ոտներ, աղիքները
դուրս թափած դիակներ, սիւնների կապած
մերկանդամ կանաչք, խորոված և սևացած
կանանց մարմնի մասեր, յոշոտած մանուկներ
և նիզակների վրայ ցցուած մօլլաների մօրու-
քաւոր գլուխներ ու գլխիվայր այրուող կրա-
կի խարոյկի մէջ կոխած կիսամեռ ծերունի-
ներ... Լաց, կոծ, հառաչ, օւնոցներ խառն-
վում էին Բախտիարների խռպոտ երգերին...
և արիւնոտ էին նրանք և նրանց նիզակնե-
րից արիւն էր կաթում, դաշտի խոտը կար-
մրել էր ու արեան լճակների մէջ նմանում
Գիլանի ու Մազանդարանի ճահիճներին...

Գիւղի տները քարուքանդ, կամ նոր փլում,
կամ արդէն մոխիր դառել և կամ հետզհետեւ
կործանվում էին. իսկ նրանցից երբեմն դէպի
օդը սլացող վառուած տախտակները գալիս,
տժժալով ընկնում էին արիւնի լճակների
մէջ և պատճառ դառնում վայրենիների ար-
ձակած ուրախ օւնոցներին...

Բէրամը և Ֆէրրաջն իրանց ընկերների հետ

թաքնուած խոտերի մէջ, այդ բոլորը տեսնում էին. նրանց աչքերը կատաղութիւնից փայլում, շրթունքները դողում և արիւնը եռ էր գալիս... փոքր մի ևս՝ Ֆէրրաջն անպատճառ կը նետուէր թշնամու վրայ, եթէ Բէրամը չը բռնէր նրա թևից և չը մոմռար.

— Սպասիր, դեռ ժամանակը չէ...

Երբ փլաւը մեծ-մեծ ամաններով և խորովածը շամփուրներով գրուեց Բախտիարներին առաջ, երբ սրանք իրանց արիւնոտ ձեռներով մօտեցան կերակուրներին, Բէրամը նշան տուաւ իր զօրքին ետ քաշուելու և երբ նրանք հասել էին ամրոցի ստորոտը, Բէրամը բաժանեց զօրքին մաս առ մաս և հրամայեց սողալով մօտ գնալ թշնամու խմբերին և սպասել յարձակման նշանին:

Դրանից յետոյ նրանք նորից սրերն ատամներով բռնած մօտեցան թշնամուն և սպասեցին:

Դիշերը մուծն էր, երկինքն աւելի մթնանում էր դէպի նա բարձրացող թանձր ծուխից. կրակը բաւական տեղ սփռում էր իր լոյսը, փչում էր մի գովարար քամի և ամբողջ կրակն արծարծում... ճալթում էին

տախտակներ, օդն էին սլանում վառուած փայտեր, աղաղակում էին մեռնողները և օռնում էր թշնամին...

Յանկարձ լսուեց մի սուլոց, նրան հետեւեց ամեն կողմից կատաղի աղաղակներ և Բէրամի զօրքն ուժգնութեամբ ընկաւ թշնամու վրայ. սկսուեց կոտորած: Բախտիարները վազեցին իրանց զէնքերին, բայց խառնուեցին միմեանց և կարծելով թէ թշնամին շատ էր, շփոթուեցին ու սկսեցին միմեանց կոտորել: Կռիւը շատ չը տևեց, որովհետև Բախտիարներն սկսեցին փախչել և քիչ յետոյ պատերազմի դաշտում մնացել էին Բէրամի զօրքերից 10—15 հոգի, իսկ գետնի վրայ փռուած կալին երեք թշնամու դիակի մօտ մի մեռնողի դիակ... Յաղթութիւնը Բէրամինն էր...

Ամրոցի վերից Քէրիմ-խանի զօրքը նկատեց այդ. Քէրիմ-խանը վեր թռաւ անկողնից, ձի հեծաւ և իր մնացած զօրքովն շտապեց կռուի դաշտն իջնել...

Վազեց նա, ցնձաց նրա հոգին և նա Բէրամին փնդուեց, Բէրամին, որ հայրենիքն ազատեց:

Բայց Բէրամը վիրաւորուած էր և վիրա-

ւորուած բազմաթիւ տեղերից: Նրա մարմնի ամեն կողմում ցցուած կալին նետեր, ամեն ուղղութեամբ տեսնվում էին սրի լայն վերքեր և արիւնը լիովին ծածկել էր նրա գեղեցիկ դէմքը՝ նրան գտան մի արիւնի լճի մէջ ընկած, իսկ նրա կողքի վրայ փռուած էր թշնամու դրօշը... բոլորը շրջապատեցին վիրաւորին. Բէրամը երբ տեսաւ Քէրիմ-խանին, բարձրացաւ, յեցաւ իր բարեկամի թևերի վրայ, մի գոհ ակնարկ ձգեց իր չորս կողմը, ժպտաց և դառնալով խանին՝ շշնջեց.

— Յաղթութիւնը մերն է...

Քէրիմ-խանը յուզուած վազեց դէպի նա, գրկեց նրա արիւնոտ գլուխը, համբուրեց վիրաւոր ճակատը և գոչեց.

— Դու դիւցազն ես, ես չը գիտեմ ինչով վարձատրեմ քեզ, որովհետեւ քո արածը մեծ է քան աշխարհիս բոլոր վարձատրութիւնները... ասա, ինչ վարձատրութիւն կարող է փոխարինել...

Բէրամը ժպտաց, ձեռքը տարաւ իր տակի դրօշակին, որի վրայի վիշապն անտեսանելի էր եղել նրա արիւնից, քաշեց, գուրս հանեց, բռնելով նրա կոթից, հաւաքեց վերջին

ոյժը, պարզեց դրօշը դէպի խանը և ասաց.

— Այս վարձատրութիւնը քիչ է...

Եւ մի անգամ ևս ընկած դիակներին նայեց ու շուռը փչեց:

Քէրիմ-խանը շատ արտասուեց նրա վրայ, արտասուեց ամբողջ գորքը, արտասուեց Իրանը և Թուրանը, իսկ շայիրները թաթախեցին իրանց գրիչները արտասուքի մէջ և ողբացին նրան...

Եւ թաղեցին Բէրամին Շիրազում. նրա շիրիմի վրայ ցցեցին թշնամու դրօշը, որ ներկուած էր դիւցազնի արիւնով և Քէրիմ-խանը այդ դրօշի վրայ գրել տուաւ սոյն տողերը...

Սպիտակ էր... վիշապ ունէր իր վրայ. Բէրամը կարմրացրեց իր արիւնով, ջնջեց վիշապը... և իր վարձատրութիւնը միայն նրա մէջ տեսաւ...

Մեռաւ Բէրամը, բայց չը մեռաւ նրա անունը. շայիրները երգեցին նրան, անմահացրին նրա գործը. իսկ նրա դրօշը մի ըոպէ իրանց ուսերին կրելու պատուից մեծ պատիւ չէր ճանաչում պարսիկ փէհլեանը...

Մինչև այժմ էլ, երբ պարսիկ ժողովուրդը երկու փէհլեանների գօտեմարտութեան է

հրաւիրում, երբ մէկ ափաճան միւսին գլու-
րում է, իբր ընծայ ժողովրդից կամ իշխան-
ներից ո՛չ թէ փող կամ պալատ, աստիճան
կամ հիւրիփէրի է կամենում ստանալ... ո՛չ,
այդ բոլորն ի՛նչ արժեն այն պարզ ձողի առ-
ջև, որ ահա ցցուած կենում է կրկէսի ծայ-
րում, փողփողում է իր վրայի ոսկեթել եզ-
րերով կարմիր թաշկինակը: Անմահ Բէրամի
արիւնով ներկած թշնամու դրօշակի յիշատակն
է նա և կոչվում է բէրամ (բահրամ)... Փէհ-
լեանը ո՛չ մի պալատի, ո՛չ մի գանձի, ոչ մի
աստիճանի կամ հիւրի փէրիի հասնել չի կա-
մենում, եթէ չի կարող բէրամը ձեռն առ-
նել, դնել ուսի վրայ, պարծանքով փողոցները
ման գալ և երգել անմահ շայիր Հիւսէյնի
խօսքերը.

«Արիւնովս գնեցի թշնամու այս դրօշը,
Աշխարհի հետ չեմ փոխիլ կարմիր շորի
այս կտորը....»



ՀՀ Ազգային գրադարան



NL0585742

